ՀՀ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

23.07.2018Թ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. հուլիսի 10-ին ժամը 16^{00} -ին Բուրաստան համայնքի մշակույթի տան դահլիճում տեղի ունեցավ հանրային լսում, որի ընթացքում 2018թ. 1- ին կիսամյակում իր կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ հանդես եկավ Բուրաստան համայնքի ղեկավար Աշոտ Թարվերդյանը:

Հանրային լսմանը մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի ավագանու անդամները, «Բուրաստանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի աշխատակիցները և համայնքի բնակիչներ, ուսանողներ:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարը նշեց, որ համայնքի առջև դրված սոցիալ- տնտեսական խնդիրները լուծելու ռեալ հնարավորություններ ապահովելու համար ինչպես նախկինում, այս կիսամյակում ևս մշտական ուշադրության տակ է պահվել համայնքի բյուջեի եկամտային մասի հավաքագրումը:

2017թ սեփական եկամուտները կազմել է 8790.0 հազ. դրամ այս տարի՝ 11730.0 հազ.դրամ. : Սեփական եկամուտների աճը 2017թ. համեմատ կազմել է 2490.0հազ. դրամ , որը կազմում է 33.5 % :

Հարկի տեսակը	2017թ.	2018թ.
Հողի հարկ	3400.0հազ. դրամ	3500.0հազ. դրամ
Գույքահարկ	4150.0հազ. դրամ	5000.0հազ. դրամ
Տեղական վճարներ	160.0հազ. դրամ	1984.0հազ. դրամ
Գույքի վարձակալություն	800.0հազ. դրամ	938.0հազ. դրամ

Ավելացել է նոր հարկատեսակ՝ անասնաբույժի վճար /450.0հազ դրամ տարեկան պլան/ :

Կատարված աշխատանքների շնորհիվ համայնքի 2018թ.-ի բյուջեի 1-ին կիսամյակի համար նախատեսված սեփական եկամուտների պլանային առաջադրանքները կատարվել են 96%_ով:

2018թ. Տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ) և համայնքի հնգամյան զարգացման ծրագրի համաձայն , ապրիլ ամսին մեկնարկել և ընթացքի մեջ են Բուրաստան համայնքի գերեզմանոցի տարածքի ցանկապատի կառուցման և տարածքի բարեկարգման շինարարության աշխատանքները՝ որի համար համայնքի բյուջեից ծախսվել է՝ 6678.0հազ. դրամ

2018թ.-ի 1-ին կիսամյակում տրամադրվել է՝

.Դրամական օգնություն 1840.0 հազ. դրամի չափով, որից՝

- Բուժման ծախսերի համար -300.0հազ. դրամ

- Հայկական բանակում զինվոր ունեցող , սոցիալապես անապահով ընտանիքներին -150. 0հազ. դրամ

-Հունիսի 1-ի կապակցությամբ՝ բազմազավակ, ծնողազուրկ և հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքներին -170. 0հազ. դրամ.

- ՀՀ սահմաններից դուրս սպորտային միջոցառումների մասնակցության համար - 100.0հազ.դրամ

- Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին - 1120.0հազ. դրամ

. Հուղարկավորության նպաստ՝ -400. 0հազ. դրամ

2018թ.-ի 1-ին կիսամյակում համայնքի բյուջեում կառավարման ապարատի պահպանման համար նախատեսված ծախսերից բացի կատարվում են նաև այլ ծախսեր.

1. Միջոցառումների կազմակերպման և նվերների գնման համար համայնքի բյուջեից ծախսվել է 899. 0հազ դրամ

որից՝

* Մարտի 8-ի կապակցությամբ՝ համայնքապետարանի աշխատակազմի կին աշխատակիցներին, «Բուրաստանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի աշխատակցուհիներին և հայոց բանակի զինվորների մայրերին՝ 267. 2հազ . դրամ

* Հունիսի մեկի միջոցառման համար՝ 24. 0հազ. դրամ;

* Տյարնընդառաջ՝ 258.0 հազ. դրամ

* Սուրբ Զատիկի միջոցառում 276.0 հազ. դրամ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանի կողմից մշտական հետևողական աշխատանք է տարվել հող օգտագործողներին օգնելու, ոռոգման ջրի նորմալ մատակարարումն ապահովելու ուղղություններով:

Տարեսկզբին ազգաբնակչությանը տրվել է 3.3տ ազոտական, 0.55տ ֆոսֆորական, 1,15տ կալիումական պարարտանյութեր՝ շուկայականից ցածր արժեքով:

2018թ. –ի հուլիսի 1-ի դրությամբ համայնքի ցանքատարածությունները կազմում են՝

- Աշնանացան ցորեն -8.2 հա
- գարի -16.3 հա
- եգիպտացորեն - 2հա
- առվույտ -73 հա
- բանջարեղեն -14 հա
- բոստան - 2 հա
- կարտոֆիլ -3 հա

Ընդամենը՝ - 118 հա:

Ընդհանուր առմամբ ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատավելացել են 10.5 հա-ով :

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ինչպես նախորդ տարիներին , 2018թ-ի 1-ին կիսամյակում ևս, համայնքի ղեկավարի կողմից տարվել են աշխատանքներ կրթությանն աջակցելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի բյուջեից 144400 դրամ գումար տրամադրվել է բուրաստանաբնակ շրջանավարտներին նվերներ գնելուն և նրանց համար միջոցառման կազմակերպմանը:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի շրջանակներում Բուրաստան համայնքը հանդիսանալով գործընկեր համայնք «Շրջակա միջավայրի համաշխարհային օրը» համայնքում անցկացվեց <<Ջուրը կյանք է ամեն կաթիլը թանկ է>> խորագրով միջոցառումը՝ ինչը նպատակ ուներ բարձրացնել հանրության

իրազեկությունն Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների խնայողության վերաբերյալ, նպաստել ջրօգտագործողների վարքագծի փոփոխությանը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի բնակիչներին՝ առողջական խնդիրներ ունենալու դեպքում, համայնքի բնակիչների սոցիալական ապահովվածության հանձնաժողովի համապատասխան եզրակացության առկայության դեպքում հատկացվել է դրամական օգնություն՝ համապատասխան դեղորայք, բուժում ստանալու կամ վիրահատական ծախսերը հոգալու համար:

Հաշվետու ժամանակահատվածում լուծվել է համայնքի մեկ բնակչի խնամքի կենտրոն տեղափոխվելու հարցը / խորհրդատվություն ,փաստաթղթավորման , տեղափոխման հարցերում աջակցություն/:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են պատշաճ մակարդակով կազմակերպվել տոնական օրերին նվիրված միջոցառումները:

* Հունվարի 28-ին համայնքի մշակույթի տանը կազմակերպվել է << ԱԶԳ - ԲԱՆԱԿ >> խորագրով միջոցառում նվիրված Հայոց բանակի 26- ամյակին, միջոցառման նպատակը Հայոց բանակի օրվա կապակցությամբ՝ համայնքի ժամկետային զինծառայող ունեցող, ՀՀ բանակի սպայական կազմը համալրող և ՀՀ ռազմական ուսումնական հաստատություններում սովորող համայնքի բնակիչների ընտանիքներին շնորհավորելն ու շնորհակալություն հայտնելն էր: Միջոցառման անմիջական մասնակիցներն էին համայնքի բնակիչ՝արդեն զորացրված տղաներն, ովքեր մեծ ոգևորությամբ և պատրաստակամությամբ իրենց հույզերն ու ապրումները կարողացան փոխանցել ներկաներին՝ միջոցառնման համար նախատեսված սենյակը վերածելով << խրամատի>> :Հայոց բանակի օրվա կապակցությամբ, շնորհավորական բացիկներ են ուղարկվել համայնքի ժամկետային զինծառայողների, ինչպես նաև ռազմական ուսումնական հաստատություններում սովորողների ընտանիքներին:

* Փետրվարի 13—ին Տեարնընդառաջի կապակցությամբ այս տարի ևս համայնքի բնակիչ նորապսակներին նվիրված յուրօրինակ միջոցառում էր կազմակերպվել Բուրաստան համայնքում՝ թվով 9 նորապսակների հետ միջոցառման էր հրավիրել նաև համայնքի 4

տարեց զույգերին՝ ովքեր իրենց ստեղծած ամուր ընտանիքների օրինակով շնորհավորեցին նորապսակներին: Նորապսակներին և տարեց զույգին տրվել են նվերներ:

* Զինվորների և ռազմական ուսումնական հաստատություններում սովորողների մայրերի համար տոնական միջոցառում է կազմակերպվել նաև մարտի 8-ին: Վերջիններիս տրվել են նվերներ: Նվերներ են տրվել Բուրաստանի համայնքապետարանի աշխատակազմի, ինչպես նաև «Բուրաստան ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի աշխատակցուհիներին:

* Շարունակելով ձևավորված գեղեցիկ ավանդույթների շարքը՝ Սուրբ Զատիկը նշվել է դեռևս 1646թ.-ն կառուցված համայնքի Սուրբ Հակոբ եկեղեցու բակում (որը թեպետ պաշտոնապես չի գործում, սակայն մասնակի վերանորոգումներից հետո տեղի հավատավոր ժողովրդի համար ուխտատեղի է դարձել):

Քրիստոսի հրաշափառ Հարության՝ Սուրբ Զատկի տոնը նշանավորվեց մատաղի սրբազույն արարողությամբ՝ որն իրականացվել է համայնքի բնակչության հանգանակությամբ և համայնքի բյուջեի միջոցներով, տոնական ուտեստներով հարուստ սեղանի շուրջ համախմբելով համայնքի բնակչությանը:

* Պատշաճ ձևով կազմակերպվել և անցկացվել են Ապրիլի 24-ի՝ Հայոց ցեղասպանության 103 ամյակի և Հաղթանակի օրվան՝ մայիսի 9-ին,

* «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում»ծրագրի շրջանակներում՝ ջրի կարևորությունն ու անհրաժեշտությունը ևս մեկ անգամ շեշտելու և բնակիչներին՝ հատկապես երեխաներին վերջինիս կարևորության մասին ավելի պատկերավոր տեղեկատվություն տալու համար մայիսի 7-ին «Ջուրը կյանք է, ամեն կաթիլը թանկ է» խորագրով միջոցառումների շարքին միացավ նաև Բուրաստան համայնքը:

* Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա՝ Հունիսի 1-ի կապակցությամբ Բուրաստան համայնքի մշակույթի տան բակում և հարակից <<ԼՈՒՅՍԻ ՀՈՎԻՏ>> մանկական այգում աշխույժ և ուրախ մթնոլորտ էր տիրում՝ հեքիաթների հերոսներ ,կավճանկարչություն, համայնքի նկարչության խմբակ հաճախող երեխաների նկարների ցուցադրություն և նկարչության բաց դաս, մանկական ուրախ երաժշտություն և անթիվ ժպտացող դեմքեր: Ամեն ինչից զատ հերթական անգամ ուշադրության կենտրոնում համայնքի հաշմանդամ և ծնողազուրկ երեխաներ ունեցող, ինչպես նաև բազմանդամ ընտանիքներն էին, վերջիններիս համայնքի բյուջեի միջոցներից դրամական աջակցություն :

Համայնքի մշակութային կյանքը մշտապես ակտիվ է՝ ինչը վկայում է նաև մշակույթի տանը գործող՝ Շախմատի, պարի, նկարչության, երգի, թատերական, բոնցքամարտի

խմբակներում / թվով 150 երեխա/ երեխաների հոսքի ավելացումը՝ ոչ միայն Բուրաստան համայնքի բնակիչների այլև հարևան համայնքներից ևս՝ ինչն իր հերթին պարտավորեցնող է:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌ

* ՀՀ կառավարության որոշման համաձայն և Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզի Բուրաստան համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագրի շրջանակներում, ինչպես նաև համայնքի սեփականություն համարվող կոմունալ ենթակառուցվածքների պահպանումը, շահագործումը, ըստ հնարավորությունների՝ նորոգումն ու զարգացումն ապահովելու նպատակով մեկնարկել և ընթացքի մեջ է Բուրաստան համայնքի գերեզմանոցի տարածքի ցանկապատի կառուցման աշխատանքները , որը նախատեսում է մետաղական ցանկապատով քարե պարսպի կառուցում , մետաղական դարպասի և մետաղական դռան կառուցում ,նոր ճանապարհի կառուցում և կոպճապատում:

Այդ աշխատանքներին զուգահեռ՝ միաժամանակ, համայնքի բնակիչների ուժերով / թվով 70 տնտեսություն / վերանորոգվել է համայնքի այդ հատվածի կոյուղագիծը սպասարկող խողովակաշարի շուրջ 100մ երկարությամբ հատված՝ փոխելով վերջինիս ուղղությունը՝ հետագայում գերեզմանատան այդ հատվածում խնդիրներից խուսափելու համար:

* Համայնքապետարանի կենտրոնական մասի , ինչպես նաև բոլոր փողոցների, ճամփեզրյա տարածքների մաքրումը գտնվում է համայնքապետարանի մշտական հսկողության տակ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2018թ.-ի 1- ին կիսամյակում համայնքի ղեկավարը ինչպես միշտ, դարձյալ մշտական ուշադրության կենտրոնում է պահել բնակչության սոցիալապես անապահով խավին՝ հատկապես ծնողազուրկ և հաշմանդամ երեխաներ ունեցող, միայն թոշակառուներից բաղկացած ընտանիքներին, ուսանողներին:

Սոցօգնությունների գերակշռող մասը նպատակաուղղվել է բնակչության նշված խմբերին:

ԱՂԲԱՆԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ

* «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում ապրիլի 14-ին Բուրաստան համայնքում համապետական շաբաթօրյակի աղյունավետ իրականացման նպատակով համայնքի ղեկավարի կարգադրությամբ ստեղծվել էր հանձնաժողով՝ նրանում ընդգրկելով համայնքպետարանի, <<Բուրաստանի ԱԱՊԿ>>-ի աշխատակիցներին , համայնքի տարածքում գործող առևտրի օբյեկտների աշխատակիցներին և համայնքի բնակիչներին, կազմվել շաբաթօրյակի իրականացման գործողությունների պլան : Շաբաթօրյակին ակտիվ կերպով իրենց մասնակցությունն ունեցան համայնքի բնակիչները, համայնքի՝ շախմատի , պարի, նկարչության, վոկալի խմբակներ հաճախող երեխաները, համայնքապետարանի, <<Բուրաստանի ԱԱՊԿ>>-ի աշխատակիցները՝ էլ ավելի մաքուր և խնամված դարձնելով մեր համայնքը :

* Հաշվետու ժամանակահատվածում ևս համայնքի աղբանահանության և սանիտարական մաքրման աշխատանքները շարունակվում են իրականացվել նախատեսված կարգով:

2018թ.ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1. Համայնքապետարանի շենքի հարակից տարածքում մարզահրապարակի՝ վոլեյբոլի և բասկետբոլի մարզադաշտի կառուցման երկրորդ փուլի աշխատանքներ
2. Համայնքի Պ. Սևակի փողոցի որոշակի հատվածի և Վ. Պարտիզունու փողոցի ամբողջական լուսավորության անցկացում
3. Բուրաստան համայնքի գերեզմանոցի տարածքի ցանկապատի կառուցման և տարածքի բարեկարգման շինարարության աշխատանքների ավարտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ա. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ /